Հաստատում եմ՝
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

30.04.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 28.04.2015թ.-ի թիվ 57 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին - մարզային հողային պետական տեսչությունում (այսուհետ՝ Տեսչություն) անցկացվեց 2015թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի, գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց Տեսչության պետ՝ Մ. Մեսրոպյանը:

Նախնական տվյալներ.

Տեսչությունում ընդգրկված են տեսչության պետը, 1 գլխավոր մասնագետ և 1 առաջին կարգի մասնագետ: Տեսչությունը ղեկավարում է տեսչության պետը: Տեսչությունն ունի վարչության կանոնադրություն՝ հաստատված մարզպետի կողմից: Տեսչության պետը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում՝ վարչության գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Տեսչության կանոնադրության, աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Տրանսպորտի մասին>>, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի պահանջներին:

բ/ Մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն՝ համայնքներում իրականացված ստուգումների, դրանց վերաբերյալ կազմված ակտերի առկայության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության փորձ:

Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված է Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման կարգը: Մարզպետը, օրենսդրությամբ իրեն

վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում իրականացնում է կառավարության տարածքային քաղաքականությունը հողօգտագործման բնագավառում /1.15 կետ/:

Համադրել ենք <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Տրանսպորտի մասին>>, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքներով և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզպետին վերապահված լիազորությունները տեսչության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների հետ:

Եզրակացություն.

Համադրման արդյունքում պարզեցինք, որ Տեսչության կանոնադրությամբ և Տեսչության քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները համապատասխանում են ՀՀ նախագահի հրամանագրով, համապատասխան օրենքներով և իրավական այլ ակտերով մարզպետին վերապահված լիազորությունների պահանջների հետ:

<<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների և ՀՀ Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի պահանջներով Տեսչության կողմից ժամանակացույցով նշված, մարզի չորս համայնքներում /Արտաբույնք, Արփի, Ելփին, Սարավան/ իրականացվել են ընթացիկ ստուգումներ,կազմվել տեղեկանք: ՀՀ Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների պահանջներին համապատասխան Արտաբույնք և Արփի համայնքներում կատարվել են հողամասերի օտարումներ աճուրդային եղանակով. Արտաբույնք համայնքում՝ արտադրական նշանակության հող /մեկ աճուրդ/, Արփի համայքում՝ բնակելի նշանակության հող /մեկ աճուրդ/: ՀՀ կառավարության 28.10.2010թ.-ի թիվ 1477-Ն որոշման պահանջներին համապատասխան Ելփին և Սարավան համայնքներում կատարվել է արոտների տրամադրում, յուրաքանչյուր համայնքում կնքվել է 5 հեկտարի չափով արոտի 3-ական վարձակալության պայմանագիր :

2015 թվականին իրականացվելիք մնացած համայնքների ընթացիկ ստուգումներն ընթացքի մեջ են, որոնց վերաբերյալ Տեսչությունում առկա է համայնքների վարչական հսկողության ժամանակացույցը:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Տեսչության պետ՝ Մ. Մեսրոպյան